ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՉ Է ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐՈՆՔ ԵՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երևան 2019

ՈՒ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓԵՏՐՎԱՐ 2019թ.

Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4
Ի՞նչ է ընտանեկան բռնությունը.....5
Ո՞ր օրենքով է կարգավորվում ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարցերը.....5
Ովքե՞ր են համարվում ընտանիքի անդամներ.....5
Ո՞ր իրավունքները կարող են խախտվել ընտանեկան բռնության հետևանքով.....6
Որո՞նք են ընտանիքում բռնության տեսակները.....7
Ու՞մ կարելի է դիմել.....8
Ի՞նչ կարող է անել աջակցության կենտրոնը.....9
Ինչպիսի՞ սոցիալական ծառայություններ են գործում ապաստաններում.....10
ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....10
Ո՞վ կարող է դիմել պաշտպանին.....11
Ո՞ր դեպքերում կարելի է դիմել պաշտպանին.....11
Ի՞նչ ժամկետներում կարելի է դիմել պաշտպանին.....12
Ի՞նչպես դիմել պաշտպանին.....12
Ի՞նչ պետք է ներառի պաշտպանին հասցեագրված դիմումը.....13

Նախաբան

Սույն ուղեցույցը մշակվել է «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և իրականացվում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության[1] կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ: Ուղեցույցը նպատակ ունի բարձրացնել մարդու իրավունքների իրազեկության մակարդակը հասարակությունում:

[1] Սույն ուղեցույցը արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի՞նչ է ընտանեկան բռնությունը

Մարդու իրավունքների միջազգային չափանիշներով ընտանիքում բռնությունը մարդու հիմնարար իրավունքների խախտում է: Ընտանիքում բռնություն է ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական, սեռական, տնտեսական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումը կամ անտեսումը:

Ո՞ր օրենքով է կարգավորվում ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարցերը

Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարաբերությունները կարգավորվում են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով:

Ո՞վքեր են համարվում ընտանիքի անդամներ

Ընտանիքի անդամներ են՝

Անկախ համատեղ բնակության հանգամանքից

- ամուսինը, այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը.

- նախկին ամուսինը.
- ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողն, խնամատար ծնողը.
- որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները.
- երեխան, այդ թվում՝ որդեգրված երեխան, խորթ երեխան, հոգեզավակը.

Համատեղ բնակվող

- տատը, պապը,
- քույրը, եղբայրը, այդ թվում՝ համամայր կամ համահայր.
- ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը կամ նախկին ծնողները.
- համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր).
- ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ծնողները.
- փեսան և հարսը՝ ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար:

Ո՞ր իրավունքները կարող են խախտվել ընտանեկան բռնության հետևանքով

Ընտանիքում բռնության հետևանքով կարող են խախտվել անձի մի շարք հիմնարար իրավունքներ, այդ թվում՝

- կյանքի իրավունքը.
- դաժան և նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը.
- ընտանիքում հավասարության իրավունքը.
- ֆիզիկական և մտավոր առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը.
- արդար աշխատանքային պայմանների իրավունքը.
- ընտանիքում բռնությունից զերծ լինելու տուժողի իրավունքը.
- սեփականության իրավունքը և այլն:

Որո՞նք են ընտանիքում բռնության տեսակները

Ընտանիքում բռնությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Դրանք են՝

- ֆիզիկական բռնություն՝ ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.
- սեռական բռնություն՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.
- հոգեբանական բռնություն՝ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, այնպիսի գործողություններ պարբերաբար կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.
- տնտեսական բռնություն՝ գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության, գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը.
- անտեսում՝ երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները կամ անաշխատունակ և

կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, կրթություն, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը:

Ու՞մ կարելի է դիմել

Ընտանիքում բռնության ենթարկված անձինք իրենց իրավունքների պաշտպանության համար կարող են դիմել հետևյալ իրավասու հաստատություններին՝

- ՀՀ ոստիկանություն՝ տուժողների պաշտպանության՝ նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու, ինչպես նաև իրավունքների ու հասանելի ծառայությունների մասին պարզաբանում, ապաստարան ստանալու հարցերով.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ապաստարան ստանալու, ապաստարանին և դրա անձնակազմին ներկայացվող պահանջների պահպանման հարցերով.
- ՀՀ առողջապահության նախարարություն՝ անհատույց առաջնային բժշկական օգնություն ստանալու հարցերով.
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում՝ ոստիկանության կողմից իրավունքների խախտման, իրավունքների պարզաբանման, օրենսդրական խնդիրների և իրավական ակտերի սահմանադրականության հարցերով.
- ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ՝ ընտանիքում բռնության

ենթարկված անձանց անվճար իրավաբանական օգնություն ստանալու հարցերով.

- խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ անչափահաս, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանության, ընտանիքում բռնության պատճառով առանց խնամքի մնացած երեխաների և անգործունակ անձանց խնամքը կազմակերպելու հարցերով.
- ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցներին՝
    - ✓ աջակցության կենտրոններ.
    - ✓ ապաստարաններ:

Ի՞նչ կարող է անել աջակցության կենտրոնը

- տեղեկացնում է անձանց իրենց իրավունքների, հասանելի ծառայությունների և օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից օգտվելու կարգի մասին.
- կազմակերպում է անհրաժեշտ և անհատույց հոգեբանական, իրավաբանական և այլ ծառայությունների տրամադրում.
- որոշում է կայացնում ապաստարաններում տեղավորելու մասին.
- վարում է բռնության դեպքերի վիճակագրություն.
- կազմակերպում ռեաբիլիտացիա բռնություն գործադրած անձանց համար.
- պաշտպանության որոշումների պատճենները ստանալուց հետո բռնության ենթարկված անձին առաջարկում հոգեբանական աջակցության տրամադրում.

- իրականացում հաշտեցում օրենքով սահմանված կարգով.
- աջակցում բռնության ենթարկված անձանց աշխատանքի տեղավորման և սոցիալական աջակցություն ստանալու հարցում.
- դիմող անձի համաձայնությամբ դիմում է ոստիկանություն կամ դատարան պաշտպանության միջոցներ կիրառելու համար:

Ինչպիսի՞ սոցիալական ծառայություններ են գործում ապաստարաններում

Ապաստարանում անձը կարող է անհատույց օգտվել օրենքով նախատեսված սոցիալական հետևյալ ծառայություններից՝

- ապահով բնակելի տարածք՝ առավելագույնը 12 ամիս տևողությամբ.
- սնունդ ու հագուստ.
- երեխաներին՝ դասապատրաստման համար անհրաժեշտ կահույք և պիտույքներ.
- իրավաբանական և հոգեբանական անհատույց օգնություն.
- սոցիալական աջակցություն.
- առողջապահական հաստատություններ դիմելու գործընթացի կազմակերպում.
- աշխատանքի տեղավորման և սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցություն:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ ունի Պաշտպանին դիմելու իրավունք

Պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ 18 տարին չլրացած անձինք:

Ո՞վ կարող է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարող են դիմել՝

- ✓ անձն անձամբ.
- ✓ ծնողը, զավակը կամ այլ մերձավոր ազգականը
- ✓ ներկայացուցիչը, այդ թվում՝ փաստաբանը.
- ✓ հասարակական կազմակերպությունը՝ անձի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Կարևոր է իմանալ

Պաշտպանին դիմելն ԱՆՎՃԱՐ Է:

Ո՞ր դեպքերում կարելի է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարելի է դիմել այն դեպքում, երբ խախտվել են մարդու իրավունքներն ու ազատությունները՝

- ➲ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից.
- ➲ պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպության ու դրա պաշտոնատար անձի կողմից.
- ➲ հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից:

Ինչ ժամկետներում կարելի է դիմել Պաշտպանին

Բողոքը կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմացած լինել իր իրավունքների, այդ թվում՝ ոստիկանության կողմից խախտման մասին:

Ինչպե՞ս դիմել Պաշտպանին

Գրավոր՝

- ✓ դիմումը Պաշտպանի աշխատակազմ անձամբ կամ փոստով հանձնելով (հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա).
- ✓ Պաշտպանին կամ նրա աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով.
- ✓ էլեկտրոնային փոստով (**ombuds@ombuds.am**):

Բանավոր՝

- ✓ Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով.
- ✓ աշխատակազմ զանգահարելով (հեռ՝ +374 10 537651).
- ✓ անվճար 116 թեժ գծին զանգահարելով:

Ինչ պետք է ներառի Պաշտպանին հասցեագրված դիմումը

Պաշտպանին հասցեագրված դիմումը պետք է ներառի՝

- ✓ դիմողի անունը, ազգանունը, հասցեն.
- ✓ նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն.
- ✓ հետադարձ կապի տվյալները (հեռախոսահամարը, էլ. հասցեն և այլն).
- ✓ խնդրի նկարագրությունը.
- ✓ դիմող անձի ստորագրությունը:

Կարևոր է իմանալ

- Պաշտպանին **դիմելը չի կասեցնում** դատարան դիմելու համար սահմանված ժամկետները:
- Միաժամանակ պետական մարմիններին, բացառությամբ դատարանների, դիմելը չի խոչընդոտում Պաշտպանին հասցեագրված դիմումի քննությանը:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա
Հեռ.՝ +374 10 539271 (քաղաքային)
+374 96 116100 (բջջային)
116 (թեժ գիծ)
Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am

WWW.OMBUDS.AM

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

+374 10 546 914
+37410 546 912 (թեժ գիծ)

ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

«Արմենիան Լայթհաուս»
բարեգործական հիմնադրամ
Արմավիրի մարզ, գ. Պտղունք,
Վարդանանց 1
Հեռ.՝ +37443 500 503, +37493 327 834
20-80 (թեժ գիծ)

«Կանանց աջակցման կենտրոն» (ՀԿ)
Հեռ.՝ +37460 525 535 (քաղաքային)
+37499 887 808 (թեժ գիծ)